ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 18 ապրիլի 2024թ.

Սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Վաղարշյանի

Անդամակցությամբ՝ Հ. Հովակիմյանի

Վ. Գրիգորյանի

Քննության առնելով Սիրան Շամամյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Սիրան Շամամյանի (այսուհետ՝ Դիմող) դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2024 թվականի ապրիլի 1-ին (փոստին է փոխանցվել 2024 թվականի մարտի 29-ին): Դիմողը Սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումում խնդրել է.

«ՀՀ աշխատանքային օրենսգրքի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը ճանաչել Սահմանադրության 79-րդ հոդվածին հակասող և անվավեր»:

2. Ներկայացնելով թիվ ԵԴ/21353/02/22 քաղաքացիական գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողը նշում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը ձևակերպված չէ բա-

վարար հստակությամբ և հնարավորություն չի տալիս դրա հասցեատերերին ընկալել օրենսդրի պահանջը, կանխատեսել դրա հետևանքները և իրենց վարքագիծը համապատասխանեցնել վիճարկվող դրույթներով սահմանված պահանջներին:

Ըստ Դիմողի՝ «Ստացվում է, որ օրենսդրորեն ամրագրված չէ գործատուի կողմից Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու իրավունքը ծագելու պահից գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու ժամկետներ և սահմանված չեն այն դեպքերը, երբ գործատուն նշված մասով աշխատանքային պայմանագիրը լուծելու հնարավորության վրա հասնելու պարագայում չի լուծում աշխատանքային պայմանագիրը և աշխատողը վերադառնում է աշխատանքի (...)»:

Դիմողը նշում է նաև, որ իր պարագայում ինքը մտածել է, որ եթե գործատուն իր անաշխատունակության 121-րդ օրը չի լուծել իր հետ կնքված աշխատանքային պայմանագիրը, ուստի գործատուն, ըստ էության, ցանկացել է շարունակել իր հետ աշխատանքային հարաբերությունները, և Դիմողը, ելնելով այդ կանխավարկածից, սպասել է մինչև իր անաշխատունակության հիմքերը վերանան, վերադառնա աշխատանքի և փաստացի այդ ժամանակահատվածում չի փնտրել նոր աշխատանք:

Դիմողը պնդում է, որ Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի նման կարգավորումը գործատուին հնարավորություն է տալիս դրսևորել կամայական վարքագիծ, իսկ աշխատողին դնում է անորոշ վիճակի մեջ:

Միաժամանակ, Դիմողը սույն անհատական դիմումով միջնորդել է իրեն ազատել պետական տուրքի վճարումից՝ հաշվի առնելով, որ ինքը գործազուրկ է, ինչպես նաև հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում և չունի բավարար միջոցներ Սահմանադրական դատարան դիմելու համար օրենքով սահմանված պետական տուրք վճարելու համար: Ուստի՝ չունի պետական տուրքը վճարելու հնարավորություն:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրության արդյունքներից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարա-

նի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում: Հիշյալ դրույթը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքի կամ ազատության խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և հիմնավորումներ, որ իր պնդմամբ Սահմանադրությանը հակասող նորմատիվ իրավական ակտի կիրառումը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքի կամ ազատության խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Նույն օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումներով գործի քննությունը, ի թիվս այլնի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:

Սահմանադրական դատարանը 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է, որ «(…) անհատական դիմումների քննությունը կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է: (…) Անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ, թեև դրանում բարձրացված հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ, դիմումում չեն բերվում բավարար իրավական փաստարկներ այն հիմնավորելու համար»:

Սահմանադրական դատարանը վերը նշված՝ ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ նաև արձանագրել է, որ «(…) դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Նշված պահանջին համապատասխան՝ դիմողը պետք է նաև դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր (…)»:

Միաժամանակ, 2009 թվականի նոյեմբերի 24-ի ՍԴՈ-839 որոշմամբ Սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ եթե դիմողի կողմից չի հիմնավորվում վիճարկվող դրույթի և իր իրավունքների

ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապը, ապա տվյալ դիմումն ակնհայտ անհիմն է:

Այս առումով հարկ է փաստել, որ Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումների հիմնավորված լինելու պահանջը, համաձայն որի՝ դիմողը պետք է հիմնավորի, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքն է խախտվել, և ի՞նչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքի խախտման միջև, չի կարող պահպանված համարվել այն դեպքում, երբ դիմողը պարզապես հղում է կատարում Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության՝ առանց ներկայացնելու վիճարկվող դրույթի և համապատասխան հիմնական իրավունքի կամ ազատության ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապի առկայության բավարար հիմնավորումներ:

Վերը ներկայացված դրույթներով ամրագրված իրավակարգավորումները և Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը հանգել է այն եզրակացության, որ՝

Դիմողը սույն անհատական դիմումի շրջանակներում բավարար կերպով իրավաբանորեն չի հիմնավորել իր՝ Սահմանադրության 57-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, ինչպես նաև 63-րդ հոդվածով երաշխավորված՝ համապատասխանաբար աշխատանքի ընտրության ազատության, աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթի միջև պատճառահետևանքային կապի անմիջական առկայությունը: Փոխարենը՝ Դիմողը սահմանափակվել է իր՝ Սահմանադրության 57-րդ և 63-րդ հոդվածներով երաշխավորված հիմնական իրավունքների խախտման վերաբերյալ պնդումների պարզապես վկայակոչմամբ՝ բավարար կերպով չհիմնավորելով իր կողմից վիճարկվող դրույթի և իր վկայակոչած իրավունքների խախտման միջև պատճառահետևանքային կապի առկայությունը՝ սույն կոնկրետ գործի հանգամանքների և առանձնահատկությունների հաշվառմամբ:

Անդրադառնալով Դիմողի կողմից բարձրացված՝ վիճարկվող դրույթի՝ Սահմանադրության 79-րդ հոդվածով երաշխավորված՝ որոշակիության սկզբունքին համապատասխանության հարցին՝ Սահմանադրական դատարանը նշում է, որ տվյալ հոդվածի բովանդակությունից բխում է, որ այն կարող է դիտարկվել միայն **որևէ հիմնական իրավունքի կամ ազատության** սահմանափակման համար հիմք հանդիսացող օրենքի որակին առաջադրվող սահմանադրական պահանջ, որը սույն պարագայում տեղի չի ունեցել: Այսինքն՝ Սահմանադրության 79-րդ հոդվածով նախատեսված դրույթն ինքնին չի պարունակում սահմանադրական հիմնական իրավունք կամ ազատություն, այլ նման իրավունքի և ազատության սահմանափակմանն ուղղված օրենքի սահմանադրական պայման:

Հետևաբար՝ Դիմողի կողմից վիճարկվող դրույթի՝ իր որևէ հիմնական իրավունքի կամ ազատության խախտման հանգեցնելու հիմնավորումների բացակայությունը բացառում է վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից՝ նման դիմումի ակնհայտ անհիմն լինելու հիմքով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Բավարարել Սիրան Շամամյանի՝ պետական տուրքի վճարումից ազատելու մասին միջնորդությունը:

2. Սիրան Շամամյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝ Ա. Վաղարշյան

Անդամներ՝ Հ. Հովակիմյան

Վ. Գրիգորյան

18 ապրիլի 2024 թվականի
ՍԴԴԿՈ-16